

ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 26 և 27-ին Մայր Աթոռում տեղի ունեցավ ներքին թեմերի խորհրդակցական ժողով, որին մասնակցում էին՝

1. Մայր Աթոռից՝ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, ներսես ծ. վրդ. Պոզապալյանը, Մուշեղ Վրդ. Պետիկյանը, Գերագույն հոգևոր խորհրդի ու Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը, դիվանապետը, ֆինանսական և տնտեսական բաժինների վարիչները:

2. Արարատյան թեմից՝ առաջնորդական փոխանորդ տ. Վահան եպս. Տերյանը, Սուրեն Արևշատյանը, Զավեն Աղասյանը, Պարգեվ Շահբազյանը, Գևորգ Ամալյանը, Խաչիկ Կուզաբաշյանը, Պանդուխտ Մանուկյանը:

3. Շիրակի թեմից՝ թեմական առաջնորդ տ. Մաշտոց եպս. Թաջիրյանը, Նորայր քհն. Սարգսյանը, Վազգեն քհն. Ղարագյոզյանը, Հովսեփ Ալեքսանյանը, Մովսես Անթապյանը և Ժիրայր Փափազյանը:

4. Վրաստանի թեմից՝ թեմական առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, Ալեքսանդր Հովսեփյանը, Գևորգ Դուրգարյանը, Սամվել Իսախանյանը, Խաչիկ Հեկեկյանը:

5. Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի թեմից՝ Ռոստովի առաջնորդական փոխանորդ տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և Սարգիս Մելքոնյանը:

6. Ադրբեջանի թեմից՝ թեմական առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, Գրիգոր քհն. Անանյանը և Աբգար Միրզոյանը:

7. Գեղարդի վանքից՝ վանահայր տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, Արա Բաստրմաջյանը (տնտեսվար):

Մարտի 26-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 8-ին, թեմական առաջնորդները և պատգամավորները ներկա են լինում Արևվագալի հանդիսավոր ժամերգության, որին նախագահում էր Վեհափառ Հայրապետը:

Ժամը 11-ին Վեհարանում սկսվում է ներքին թեմերի խորհրդակցական ժողովը, որտեղ քննվում են՝ 1968 թվականի բյուջեի կատարողականը և 1969 թվականի նախահաշիվը՝ ըստ թեմերի:

Երեկոյան պատգամավորները Երևանում ներկա են լինում դրամատիկական թատրոնում «Աստվածային կատակերգություն» ներկայացմանը:

Մարտի 27-ին, հինգշաբթի, ժամը 11-ին, Վեհարանում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել բոլոր պատգամավորներին: Լուսարարապետ տ. Հայկազուն ար-

բեպիսկոպոսը բարի գալուստ է մաղթում թեմական առաջնորդներին ու պատգամավորներին և Վեհափառ Հայրապետին զեկուցում, որ չորեքշաբթի օրը Մայր Աթոռի հանձնաժողովը քննել է թեմերի կատարողականը և 1969 թվականի բյուջեի նախագիծը: Ապա սրբազան հայրը խնդրում է Ն. Ս. Օծությանը տալ Իր օրհնությունը խորհրդակցության մասնակիցներին:

Վեհափառ Հայրապետը ողջունում է հոգևորական ու աշխարհական բոլոր պատգամավորների ներկայությունը, բարի գալուստ է մաղթում նրանց և խոսում ընդհանրապես ներքին թեմերի եկեղեցական կյանքի է՛լ ավելի կազմակերպման, մեր եկեղեցական կարիքների մասին՝ անելով օգտակար թելադրություններ, և նշում է գործի հաջողության համար ուղիներ և միջոցառումներ: Ն. Ս. Օծությունը անդրադառնում է նաև հայ եկեղեցու կյանքի հետ կապված մի շարք կարևոր հարցերին:

Ժամը 3-ին Վեհարանում պատգամավորների պատվին տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում նաև Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ և Մայր Աթոռի միաբաններ, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը, դիվանապետը, ֆինանսական և տնտեսական բաժինների վարիչները, շուրջ 50 հոգի:

Ելույթներ են ունենում՝ Վեհափառ Հայրապետը, տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, տ. Հուսիկ և տ. Կոմիտաս եպիսկոպոսները, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը և ներկաներից ոմանք:

Երեկոյան պատգամավորները Երևանի օպերային թատրոնում ներկա են լինում Վերդիի «Տրավիատա» օպերայի ներկայացմանը:

Մարտի 28-ին, ուրբաթ օրը, առավոտյան, բոլոր պատգամավորները ուխտագնացության են մեկնում Սարդարաբադի հերոսամարտի հուշարձանին:

Ժամը 2-ին Երևանի «Արագիլ» ճաշարանում պատգամավորների պատվին տրվում է ճաշկերույթ: Երեկոյան Մայր տաճարում պատգամավորները ներկա են լինում վերջին Հսկման արարողությանը, որին նախագահում է Վեհափառ Հայրապետը:

Մարտի 29-ին, շաբաթ օրը, թեմական առաջնորդներն ու պատգամավորները հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից ու մեկնում իրենց թեմերը: